

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY


ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020



ԻԳԻԹ ԳԱԵՐԵԳԻՆԻ ՂԱՐԻՔՅԱՆ

2020 թ. օգոստոսի 19-ին՝ կյանքի 83-րդ տարում, ծանր հիվանդությունից հետո վախճանվեց ԵՊՀ վաստակաշատ դասախոս, հնագետ-պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Իգիթ Գարեգինի Ղարիքյանը:

Ի. Ղարիքյանը ծնվել է 1937 թ. դեկտեմբերի 1-ին Յրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղում: 1939 թ. ընտանիքը տեղափոխվել է Երևան:

Նա 1947 թ. ընդունվել և 1957 թ. ավարտել է Երևանի Հովհաննես Թումանյանի անվան թիվ 32 միջնակարգ դպրոցը:

1957-1960 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1960-1965 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, 1965-1968 թթ.՝ Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրայում:

1970 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Լոռե ամրոցը և Նրա պեղումները» թեմայով:

1972 թ. Ի. Ղարիքյանը ստացել է դոցենտի կոչում:

Անվանի հնագետը 1996 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Գլաձոր (տեղադրությունը, պեղումները, վիմագրերը)» թեմայով և արժանացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի:

2005 թ. Ի. Ղարիքյանին շնորհվել էր պրոֆեսորի կոչում:

Անվանի գիտնական-մանկավարժը 1968 թվականից դասավանդել է Երևանի պետական համալսարանում: Տասնամյակներ շարունակ նա կրթել է բազմաթիվ պատմաբանների և հնագետների, որոնցից շատերը այսօր էլ առաջատար դիրքեր ունեն հայագիտության ոլորտում: Նրա հետ միասին բազմաթիվ հնագետներ մասնագիտացել են նաև դաշտային աշխատանքներում՝ իրականացնելով հնագիտական պեղումներ հայտնի հնավայրերում:

Ի. Ղարիքյանը 2001-2005 թթ. եղել է ԵՊՀ հնագիտության ամբիոնի վարիչ, 2005-2010 թթ.՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ, իսկ 2000 թվականից Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ էր:

Նրա աշխատանքները վերաբերում են միջնադարյան Հայաստանի պատմությանը, Լոռե բերդաքաղաքի, Թանահատի վանական համալիրի, Բջնի բերդի և այլ վայրերի հնագիտական պեղումներին և դրանց արդյունքներին: Մասնակցել է նաև Դվինի, Արմավիրի, Գառնիի, Սպիտակի և Լճաշենի հնագիտական պեղումներին: Մեծավաստակ գիտնականը հեղինակ է միջնադարյան Հայաստանի պատմությանը, հնագիտությանը, վիմագրությանը, ճարտարապետությանը և նյութական մշակույթին վերաբերող 70-ից ավելի գիտական հետազոտությունների (մենագրություններ և հոդվածներ):

Սիրված հայագետը պարգևատրվել է «Մովսես Խորենացու», ՀՀ կրթության և գիտության նախարարության և Երևանի պետական համալսարանի ոսկե մեդալներով ու այլ պետական, գերատեսչական պարգևներով և պատվոգրերով:

Իգիթ Ղարիբյանի հիշատակն անմար կմնա գործընկերների և ուսանողների սրտերում:

Էդիկ Մինասյան – պ.գ.դ., պրոֆեսոր